

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՖԱԹԵՄԵ ՄՈՒՍԱՎԻ ՄԻՐԱՔ

ՎԱՖՍԻ ԲԱՐԲԱՈԸ

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար

բ.գ.դ., պրոֆ. Գ. Ս. Ասատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ.գ.դ., պրոֆ. Մ. Լ. Խաչիկյան
Բ.գ.թ., Զոնեյդի Զաֆար Մահմուդ Ալի
Մոհամմադի

Առաջատար կազմակերպություն

Թեհրանի հասարակագիտության և
մշակութային ուսումնասիրությունների
ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հունիսի 18-ին՝ ժ. 15-ին, ՀՀ ԳԱԱ Հ.
Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորիչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ.. մայիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝

Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսությունը նվիրված է Իրանի Համադան նահանգի արևելյան հատվածի լեռնային շրջանում տեղակայված Վաֆս բնակավայրի բարբառի քննությանը:

Իրանական բարբառների ուսումնասիրության կարևորությունը բխում է ընդհանուր լեզվաբանության, իրանական համեմատական լեզվաբանության առավել խոր հետազոտման անհրաժեշտությունից: Մյուս կողմից, ինչպես մնացյալ լեզուների բարբառային խմբերի դեպքում, իրանական բարբառները կանգնած են կորստյան վտանգի առջև, և դրանց գրառումն ու համապարփակ դիտարկումն ուղղված է նաև հնավանդ բազում եզրեր պարունակող բարբառների պահպանմանը: Խնդրի գիտակցման հիմքերից է բխում հայ իրականության մեջ իրանական բարբառների ուսումնասիրության արդիական իրավիճակը: Այստեղ հայագիտական և իրանագիտական կայացած դպրոցների կողմից լայնորեն քննվում են նաև իրանական բարբառները: Իրանական բարբառների բազմակողմանի ուսումնասիրությունը վեր է հանում նաև գրային ավանդույթներով հարուստ իրանական աշխարհի բառապաշարային բնիկ միավորներ, որոնց մի մասը տեղ է գտել նաև հայոց լեզվում:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները:

«Վաֆսի բարբառը» ատենախոսությունը, բազմակողմանի ուսումնասիրության ենթարկելով բարբառը, հետապնդում է մի շարք նպատակներ՝

- Համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդով ներկայացնել ողջ դաշտային նյութը՝ առկա գիտական գրականության հենքի վրա,
- վերականգնել բարբառում առկա հնավանդ բառերը և քերականական ձևերը,
- պատմահամեմատական դիտանկյունով ներկայացնել բարբառի հնչյունական կազմը, ինչպես նաև ձևաբանական դրսևորումները,
- հետազոտած նյութի հիման վրա կատարել համապատասխան դիտարկումներ և եզրակացություններ:

Աշխատանքի գիտական նորույթը:

Ատենախոսությունը մեծապես հիմնված է դաշտային նյութի վրա, որը մինչև այժմ չի դրվել շրջանառության մեջ: Նյութի բազմակողմանի ուսումնասիրությունը, գիտական գրականության համադրումը, պատմահամեմատական քննությունը աշխատանքի նորարարությունների ելակետն են:

Կատարվել է ամբողջական տարածամանակյա և համաժամանակյա հետազոտություն խնդրո առարկա թեմայի ուսումնասիրման բոլոր ոլորտներում:

Մանրամասն մոտեցում է ցուցաբերվել քերականական բարդ կառույցների քննության գործում:

Բառային վկայաբերումների հոլովություն ներկայացվել է ողջ հնչյունական գունապնակը:

Աշխատանքի կիրառական նշանակությունը (գործնական ու տեսական արժեքը):

Ատենախոսության մեջ քննված հարցերը, ցուցաբերված մոտեցումները միտված են հիմնարար գործնական և տեսական նյութ տրամադրելու հետագա ուսումնասիրողներին:

Տարածամանակյա լուսի ներքո քննված թեման կարող է նպաստել իրանական համեմատական բարբառագիտության աշխատանքներին:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը:

Աշխատանքում հավասարապես և զուգահեռաբար կիրառվել են պատմահամեմատական և նկարագրական լեզվաբանական մեթոդները: Ներկա մեթոդների համադրումը կապված է Վաֆսի բարբառի համաժամանակյա ու տարածամանակյա լեզվական վերլուծության հետ:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը:

«Վաֆսի բարբառը» ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, համառոտագրությունների և օգտագործված գրականության ցանկերից:

Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Տպագրված նյութերը ցույց են տալիս, որ Համադան նահանգի բարբառների և խոսվածքների ուսումնասիրությունը սկսվում է 20-րդ դարի 50-ական թվականներից, երբ մեծ ծաղկում էին ապրում նաև արևմտյան իրանագիտական դպրոցները թե՛ հնագիտական նյութերի վերծանման, թե՛ դաշտային աշխատանքների իրականացման ուղղություններով: Ատենախոսության մեջ ներառվել են ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, պարսկերեն աշխատություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության ներածական մասում քննվում են Վաֆսի բարբառի՝ իրանական լեզուների համակարգում դիրքային պատկանելության, բարբառում հնաբանությունների առկայության, ինչպես նաև Վաֆսի տեղակայմանն առնչվող խնդիրները: Առանձին հատվածներով ներկայացված են նաև «վաֆս» բառի ստուգաբանության ծավալուն տեսությունը, Վաֆս տեղանքի պատմական-ժամանակագրական տեղեկությունները և գրականության մանրամասն տեսությունը:

ԳԼՈՒԽ 1. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վաֆսի բարբառն ընդհանուր գծեր ունի արևմտափրանական լեզուների թե՛ կենտրոնական, թե՛ թաթական բարբառների հետ և ներկայացնում է այս բարբառներին բնորոշ հնչյունական կազմ: Տարբերություններ կարող են նկատվել ձայնավորների արտաբերման տևականության մեջ: Սա է պատճառը, որ ուսումնասիրվող բարբառի առնվազն երկու գիտական հրապարակումներում (Պ. Լեկոկ, Դ. Սթիլո) ձայնավորական համակարգի ներկայացման ժամանակ հանդես են գալիս որոշակի շեղումներ և տարբերություններ: Հիմք ընդունելով Դ. Սթիլոյի առավել հիմնավոր ուսումնասիրությունները, ինչպես նաև դաշտային աշխատանքներում վաֆսախոսների հետ զրույցների ընթացքում ձայնավորների արտաբերական ճշգրտումները՝ աշխատանքում հետևել ենք ընդհանրական մի համակարգի: Ըստ դրա՝ ընդհանրացրել և ի մի ենք բերել բարբառում առկա վեց ձայնավոր հնչյուն (a, æ, o, i, u, e): Երկաստիճան a ձայնավորական վիճակ ներկայացնող Վաֆսի բարբառում æ հնչյունն արտաբերվում է որպես երկար ā-ի և ə-ի միջանկյալ դիրք զբաղեցնող մի հնչյուն, որի կիրառությունը որոշ դեպքերում կամայական բնույթ է կրում: Բաղաձայնական համակարգի հնչյունները մեծ մասամբ համընկնում են ժամանակակից պարսկերենի հնչյուններին: Բացառություն է կազմում շրթնային w հնչյունը, որը թերևս կարելի է դասել բարբառի հնչյունական հնաբանությունների շարքին: Կոկորդային ‘ (‘ayn) և հագագային q (qaf) հնչյունները հանդես են գալիս բացառապես արաբական, երբեմն՝ թուրքական փոխառություններում: Սակայն պետք է նշենք, որ բարբառակիրները շատ հաճախ դրանք արտաբերում են առանց կոկորդային երանգի՝ առաջինի դեպքում հնչեցնելով պարզապես a, իսկ երկորդի դեպքում՝ γ (ŋ) հնչյունները:

Խմբակից լեզուների շրջանում կարելի է նշել հնչյունական մի յուրօրինակ երևույթ, որը համատարած բնույթ է կրում Վաֆսի բարբառում, այն է՝ միջձայնավորական դիրքում ընկած m բաղաձայնը կանոնավոր կերպով սովյալ բարբառում դառնում է w կամ v, ինչպես՝ վֆս. davan «քիթ» - ժ.պրսկ. damāy, վֆս. kawan «աղեղ» - ժ.պրսկ. kamān, վֆս. nawa «նամակ» - ժ.պրսկ. nāme, վֆս. zava «փեսա» - ժ.պրսկ. dāmād և այլն:

Ընդհանուր առմամբ վաֆսին ունի երեսուն հնչյուն:

| Բաղաձայններ | | Ճրթնային | Աղասնային | Լ երերային | Քնային | Եղնաքնային | Հագագային | Կոկորդային |
|-------------|-------------|---------------------|--------------------|-------------------|--------|------------|-----------|------------|
| Հայական | խուլ ձայնեղ | p b | t d | | č j | k g | (q) | (') |
| Նեղվածքային | խուլ ձայնեղ | f v | s z | | š | X γ | | |
| Ձայնորդ | | w | | l | y | | | h |
| Թրթռացող | | | | r | | | | |
| Ռնգային | | m | n | | | | | |
| Ձայնավորներ | | Առաջնայեզ- վային | Միջնայեզ- վային | Եզնայեզ- վային | | | | |
| Երկար | | i e | | u o a | | | | |
| Կարճ | | | æ | | | | | |

Աղյուսակ 1.1. Վաֆսի բարբառի հնչյունական կազմը՝ ըստ արտաբերման եղանակի

Վաֆսի բարբառում բավական զարգացած է երկհնչյունների համակարգը: Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, որտեղ կիրառելի է երկու երկհնչյուն (ey, ou), վաֆսիում դրանք հինգն են՝ aw, æw, ow, uw, oa: Վերջին երկհնչյունն ունի շատ սահմանափակ կիրառություն:

Ընդհանրացնելով դաշտային նյութը, ինչպես նաև ցայսօր կատարված գիտական հրապարակումները՝ կարելի է ստանալ վաֆսիում առկա հնչյունական հետևյալ պատկերը, որը համաբերվել է մի կողմից՝ վաֆսիի

բառապաշարային համեմատական քննության, մյուս կողմից՝ ընդհանուր իրանական պատմական հնչյունաբանության կանոնների հիման վրա:

| Պատմական հնչ. | Վաֆսիի հնչ. |
|---------------|-------------|
| *ā, *a | a |
| *au > o | u |
| *ai > e | l |
| *u | o |
| *i, *ī | l |

Աղյուսակ 1. 2. Ձայնավորների պատմական զարգացումը

Պղտմ. *ā, *a > վֆս. a

Իր. kāma- > kām > վֆս. kam (նակ՝ sak) «ցանկություն», իր. *kafa-, ավ.լ. kafa-> kaf > վֆս. kaf «փրփուր», իր. *sard, հ.պրսկ. θard- > վֆս. sal (sala):

Պղտմ. *au > o > վֆս. u¹

Իր. rauča- > roz > վֆս. ru «օր», իր. *kaufa-, հ.պրսկ. kaufa- > վֆս. kuh «լեռ»:

Պղտմ. *ai > e > վֆս. i

Իր. *raiza- > rez- > վֆս. riz- «լցնել», իր. *aiva-, հ.պրսկ. aiva- > վֆս. yey «մեկ», իր. *maiša- հմմտ. ավ.լ. maēša- > վֆս. miš «ղշխար» :

Պղտմ. *u > վֆս. o²

Իր. *uštra- > վֆս. oštor «ուղտ», իր. *angušta-, ավ.լ. angušta- > վֆս. angoste «մատ», իր. *brzant- > վֆս. boland «բարձր»:

Պղտմ. *i, *ī > վֆս. i

Իր. *tigrā- / *tigri-, հ.պրսկ. tigrā-, հմմտ. ավ.լ. tiyri- > վֆս. tir «նետ», *xšīra- > վֆս. šīr «կաթ»:

Վաֆսի բարբառի բառային միավորների մեծ մասը համեմատել ենք հյուսիսարևմտյան խմբակից այլ բարբառների զուգահղրական օրինակների հետ, ինչպես նաև ներկայացրել ենք իրանական մեռած լեզուների համատեքստում:

Նշենք հնչյունական զարգացումների առավել ցցուն և հետաքրքրական որոշ օրինակներ:

¹ Հ.իր. *au երկհնչյունն արդեն միջին իրանական լեզվադարաշրջանում տալիս է o (տե՛ս u Основы Иранского Языкознания, Среднеиранские Языки, 1981, с. 20)

² Վաֆսիում կան բառեր, որոնք չեն ենթարկվում սույն հնչյունական օրինաչափ անցմանը, այլ պահպանում են պատմական ձևը, ինչպես՝ վֆս. sur «կարմիր» > իր. *suxra-, հ.պրսկ. θuxra-, ավ.լ. suxra-, մինչդեռ ժ.պրսկ. sorx:

Պրմ. *b

ա. Բառասկզբի դիրքում՝

- *b- > b-

Վֆս. baxt «բախտ, ճակատագիր» < հ. իր. *baxta- > մ.պրսկ., պրթ. baxt. հմմտ. սնգու. baxt,

վֆս. bazu «բազուկ» < հ. իր. *bāzū-(ka-) > մ.պրսկ. bāzūk (հայ. փոխ. *բազուկ*) > bāzūg > ն.պրսկ. bāzū, աբյ. bāzū:

- *b- > v-

վֆս. verdan «տանել» < հ. իր. ներկայի հիմք՝ *bar- > մ.պրսկ., պրթ. burdan, bar- > ն.պրսկ. burdan > bordan, սնգու. bār-, աբյ. bar-:

բ. Բառամիջի դիրքում հին իրանական *b-ն վաֆսիում երբեմն դրսևորվում է որպես v, ինչպես՝

վֆս. avr «ամպ» < հ.իր. *abra- > մ.պրսկ., պրթ. abr > ն.պրսկ. abr, սնգու. abr,

- Բարբառում որոշ դեպքերում, բառամիջյան դիրքում՝ a հավելականի ազդեցությամբ, հ.իր. *b բաղաձայնը հանդես է գալիս որպես -n- հնչյուն, ինչպես՝

վֆս. anro, anru «հոնք» < հ.իր. *brū-ka > մ. պրսկ. brūk > brūg > ն.պրսկ. abru

- Բառամիջի դիրքում հ. իր. *-b- բաղաձայնը մի շարք ձևերում հանդես է բերում թուլացման միտում, որի արդյունքում հաճախ նաև ընդհանրապես սղվում է՝

վֆս. siya «խնձոր», ն. պրսկ. sēb > sib, աբյ. sāv, սնգու. sov:

Պրմ. *p

ա. Բառասկզբի դիրքում՝

- *p- > p-

վֆս. par «փետուր, փկք» < հ.իր. *parna-, հմմտ. ալվ. parəna > մ.պրսկ. parr > ն.պրսկ. parr, սնգու. par:

բ. Պատմական *sp հնչյունախմբում p բաղաձայնը բարբառում հիմնականում հնչյունափոխություն չի կրում, սակայն որոշ դեպքերում արտացոլվում է որպես b այսպես՝

վֆս. isbi «սպիտակ» < հ.իր. *spa-ita > մ.պրսկ. spēt > spēd > ն.պրսկ. sefid, սնգու. äspi

գ. Միջձայնավորական դիրքում.

- *p- > -*w- > -v-, -w-

վֆս. tav, taw «տապ, ջերմություն» < հ.իր. *tapa- > մ.պրսկ., պրթ. tap (հայ. փոխ.) > ն.պրսկ. tab, աբյ. tav:

Պրմ. *t

ա. *t- > t-

վֆս. tešna «ծարավ» < հ.իր. *tršna- > մ.պրսկ. tišn > դ.պրսկ. tišna, սնգու. tašūn:

բ. Բառամիջի, բառավերջի դիրքերում՝

- $-*t- > -d- > \emptyset$

վֆս. ke < հ.իր. *kata-(ka-) ն.պրսկ. kad, սնգս. ke «տուն», թալ. ka «տուն»:

Պրմ. *s

- *s- > s-

վֆս. spur «վահան, ասպար» < հ.իր. *spar- > մ.պրսկ., պրթ. spar, ispar (հայ. փոխ. *ասպար*) > ն.պրսկ. separ, սնգս. säppar:

- բ. հ.իր. $-*sp-$, *sp- բաղաձայնական խումբ > -sp-, -sb-, s-

վֆս. spah «զորք» < հ.պրսկ. * spāḏ-, *spāḏapati- «զորագլուխ» » մ.պրսկ. spāhpat, պրթ. spāḏpat (հայ. փոխ. *սպարապետ*), ն.պրսկ. sipāh > sepāh:

ԳԼՈՒԽ 2. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վաֆսի բարբառում գոյականի հոլովական (ուղիղ-թեք) համակարգի, անորոշ առման, սեռի ու թվի քերականական կարգերը տարբերակվում են ձևաբանական ցուցիչներով:

Գոյականների մեծ մասի հնչյունական կազմը նշում է վերջիններիս սեռը: Իգական սեռի գոյականները, ըստ նշված համապատասխան վերջամասնիկների, բաժանվում են հետևյալ երկու խմբի՝ ա) անշեշտ $-æ$ և բ) շեշտակիր $-é$, որոնք ունեն տարբեր հոլովական վերջավորություններ: Իսկ բաղաձայնով (zævin «երկիր, գետին», երկհնչյունով (hæssew «հաշիվ»), շեշտակիր $-æ'$ և այլ ձայնավորներով (amu «հորեղբայր, šo «գիշեր, երեկո») վերջացող բառերը արական սեռի գոյականներ են:

Գոյականը սեռով համաձայնում է՝

ա) որոշչային ածականների հետ, որոնք հաջորդում են անվանը, ինչպես՝ æsbæ mæzæon \emptyset «մեծ շուն» (ար.), kugæ mæzæon-æ «մեծ կատու» (իգ.);

բ) վիճակ արտահայտող բայերի անցյալ դերբայի հետ, որը հանդես է գալիս որոշչային գործառույթով, šey zerd-æ «պատուված վերնաշապիկ (ար.), hammuæ zerd-é «պատուված գիվե»³ (իգ.);

գ) օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի հետ, ինչպես՝ In aw-æ honok =oæ «Այս ջուրը սառն է» (իգ.);

դ) էրգատիվ կառույցի բայ-ստորոգյալի հետ, երբ այն թվով և դեմքով համաձայնում է օբյեկտի հետ:

Հոգնակի թվի կազմությունը երկու սեռերի համար համընդհանուր է: Բարբառի թվանիշ թեքություններն են՝ անշեշտ -e (իգ.2-*ie*) -ն ուղիղ հոլովում և -án (իգ. 2-*ián* (i+án) -ը՝ թեք հոլովում:

Գոյականի երկհոլով համակարգին հատուկ է ուղիղ և թեք հոլովների հակադրությունը՝ պայմանավորված հոլովական թեքության գործառույթով: Թեք

³ գիվե – գյուղական կոշիկի տեսակ՝ վրան հյուսած, ներբանը կտորից:

հոլովը, ի տարբերություն ուղիղ հոլովի, կազմվում է հիմքին միացող հոլովացուցիչով: Այն, ըստ էության, ապահովում է երկու՝ ա) սեռական և բ) հայցական-տրական, հոլովների գործառույթը:

Ստորև բերված են եզակի և հոգնակի գոյականների թեք հոլովի ցուցիչները.

| | Արական | Իգական 1 | Իգական 2 |
|-------------|-------------|-------------|-------------|
| եզ. ուղ. հ. | ∅ | -æ (անշեշտ) | -é |
| եզ. թեք հ. | -i (անշեշտ) | -é | -í |
| հզն. ուղ հ. | -è (անշեշտ) | -è (անշեշտ) | -íe (<í+e) |
| հզն. թեք հ. | -án | -án | -ián (i+án) |

Ածականը, ըստ դիրքային հատկանիշի, հիմնականում ետադաս է գոյականին և վերջինիս հետ հարաբերվում է առանց հատուկ միացնող ձևույթի, այսինքն, ի տարբերություն պարսկերենի, չի ստանում իզաֆետային ցուցիչ⁴, ինչպես՝ *bawæ pir* «*ծեր հայր*», *mišæ isbiæ* «*սպիտակ ոչխար*»:

Ետադաս ածականը լրացյալ գոյականի հետ նախ և առաջ համաձայնում է սեռով, ինչպես՝ *mæzæen* «մեծ, լայն» (*ար.*, ուղ. հ., եզ.), *mæzæen-i* (թեք հ., եզ.), *mæzæen-æ* (*իզ.*, ուղ. հ., եզ.), *mæzæen-e* (*ար./իզ.*, ուղ. հ., հզն.), *mæzæen-án* (*ար./իզ.*, թեք հ., հզն.):

Ետադաս ածականի վրա տեղափոխվում են լրացյալ գոյականի բոլոր հոլովական վերջավորությունները: Արդյունքում գոյականը հանդես է գալիս իր նախնական ձևով: Միայն իգական սեռի գոյականի եզակի թվի հոլովական վերջավորություններն են, որ ավելանում են և՛ գոյականին և՛ ածականին: Ինչպես՝ *bær* «դուռ» (*ար.*, եզ., ուղ. հ.) *bær-i* (*թեք հ*), *bær* ու՝ *-i* «նոր դուռ(ը)» (*թեք հ*):

Հոգնակի գոյականները ածականների ազդեցությամբ կրում են հետևյալ փոփոխությունները՝ *bære* «դռներ» (*ար.հզն.*, ուղ.հ.), *bærán* «դռներ» (*ար.*, հզն., *թեք հ.*), *bær* ու՞ *é* «նոր դռներ» (*ար.հզն.*, ուղ.հ.), *bær nuán* «*ար.հզն.*, *թեք.հ.*):

Որականական ածականը Վաֆսի բարբառում օժտված է համեմատության երկաստիճան կարգով՝ դրական և բաղդատական: Բաղդատական աստիճանի կազմության մանրակաղապարն է՝ դրական ածական + - *tær* վերջածանցը:

Բարբառը տարբերակում է դերանունների հետևյալ տիպերը՝ անձնական, ստացական, ցուցական, անդրադարձ, հարցական, ժխտական, որոշյալ և անորոշ, որոնք ևս հանդես են գալիս ուղիղ և թեք հոլովներով:

Ինչպես բոլոր թաթա-թալիշական բարբառներում, այնպես էլ Վաֆսի բարբառի ինքնուրույն անձնական դերանունների թեք հոլովն ունի հատուկ

⁴ Stillo D., Grammar Notes, p 230.

կազմություն: Բոլոր դեմքերի համար (ինչպես նաև հարցական ke «ո՞վ» դերանվան), երկրորդ դեմքից բացի, թեք հոլովի ցուցիչ է t (æ-) -ն, որը միանում է դերանվանը սկզբից: Եզակի երկրորդ դեմքում նախադաս դիրքում ավելանում է es-: Վաֆսի բարբառի t(æ-)-ն և es-ը թաթա-թալիշական բարբառների ճի- և օճ- մասնիկների ապաքմայնացված տարբերակներն են:

Բարբառում առկա ստացական դերանունները⁵ մերձենում են հայերենի ստացական հոդերին՝ գործածվելով անձնական դերանունների փոխարեն և ցույց են տալիս պատկանելություն, հատկացում կամ վերաբերություն⁶:

Վաֆսի բարբառի ստացական դերանուններն են՝

Ուղ.հ., եզ. I -óm(e)/ -im(e), II -i, III -e (ար., ընդհանուր)/ -oæ (իզ.),

հզն. I -ám(e), II -a, III -énd (e)

Թեք հ. եզ. I --óm / -im-, II -i, III -es/ -is-

հզն. I -oan, II -ian, III --esan/-isan-

Վաֆսի բարբառի անդրադարձ դերանունն է՝ ešdæn «իր, յուր», որը կիրառվում է՝

1. ստացական դերանունների թեք հոլովի վերջավորությունների հետ, ինչպես՝

Luas-i ešden-i-s qeleq æt-ar-e «Աղվեսն ինքն իրեն զարդարում է»:

2. ուղիղ հոլովով որպես շեշտված-սաստկական դերանուն, ինչպես՝

Xarkeyn ešdæn bæ- mæredæ-ve «Փուշ հավաքողը ինքը մահացավ»:

3. հատկացյալի հետ՝ ցույց տալով պատկանելություն, ինչպես՝

Ešden-i-s nawæ-s bæ-nnevisdæ «Նա գրեց իր նամակը»:

4. որպես ընդհանուր դերանուն, ինչպես՝

æ-c-om ešden-i-s loxd- kær-om «Ես գնում եմ նրան անզեն քերթելու»:

Յուցական in «այս, սա» և an «այն, այդ, դա» դերանուններից ածանցվում են բաղադրյալ ցուցական դերանուններ՝ տեղի, ժամանակի, չափ ու քանակի իմաստներով:

Վաֆսի բարբառի թվականները մեծ մասամբ պարսկական փոխառություններ են: Քանակական թվականները պարսկերենի քանակական թվականներից առանձնանում են միայն որոշակի հնչյունական հատկանիշներով, որոնք ավելի ուշ շրջանի փոփոխություններ են, ինչպես՝ 1 – պրսկ. yek, վֆս.՝ yey, 7- պրսկ. haft, վֆս. hæf, 8 պրսկ. hašt, վֆս. hæš, 10 պրսկ. dah, վֆս. da:

⁵ Իրանական լեզուներում այս դերանունների համար ընդունված է *էնկիլիդի* տերմինը, որը հայերենում թարգմանաբար ստանում է *կցական* անվանումը:

⁶ Մարգարյան Ա., Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, ԵՊՀ, 2004, էջ 325

Բարբառի դասական թվականները կազմվում են՝ քանակական թվականներին ավելացնելով –om կամ –omin վերջածանցները, ինչպես՝ čarom/čaromin «չորրորդ», pazdæ^hom / pazdæ^homin «տասնհինգերորդ: –om վերջածանցով կազմությունները ետադաս են գոյականին, իսկ –omin-ով՝ նախադաս, ինչպես՝ Sevvomin næ:ræ «երրորդ ազդակը», axre seyyomi «երրորդ ջրաղացը»:

Վաֆսի բարբառի կոտորակային թվականները նկարագրական երկու եղանակներով են կազմվում: Առավել տարածված է երկու քանակական թվականով կազմությունը, որի հայտարարը նախադաս է համարիչին, ինչպես՝ se yey «մեկ երրորդ»: Որոշ դեպքերում երկրորդ բաղադրիչին ավելանում է –um վերջամասնիկը՝ se yeyum «մեկ երրորդ»:

Վաֆսի բարբառն օժտված է կապերի տեսակների բազմազանությամբ: Նախադրություններից և ետադրություններից բացի՝ լեզվում առկա է նաև երրորդ, այսպես կոչված՝ երկու կապերով շրջանաձև կառույցը, որը նախադրության և ետադրության միաժամանակյա կիրառությունն է: Կապերը կարելի է բաժանել հետևյալ ենթատեսակների.

1. Նախադրություններ – æz «–ից (բաց.հ.)», dæ «դեպի (հնգմ. ան. խնդ.), մեջ», hegra «համընթաց, միասին», bæ «դեպի (շարժման ուղղություն)», o «դեպի (տր.հ.), վրա, վերև»:

2. Ետադրություններ.

ա) պարզ ետադրություններ, ինչպես՝ dæ «մեջ», qærar «նման», ra «հետ»,

բ) բարդ ետադրություններ, ինչպես՝ manæ-dæ «մեջ»:

3. Շրջանաձև կառույց, (նախադրություն–ետադրություն համակցություն).

ա) կառույցի նախդիրային անդամը կարող է լինել պարզ կամ բարդ, տրված օրինակում՝ բարդ, ինչպես՝ æz zer...-dæ «տակից»,

բ) կառույցի ետդիրային անդամը կարող է լինել պարզ կամ բարդ, տրված օրինակում՝ բարդ, ինչպես՝ sær-dæ «ծայրին»:

Վաֆսի բարբառի բայական համակարգի խոնարհման հարացույցում, ինչպես իրանական մյուս լեզուներում և բարբառներում, ժամանակային հակադրությունը հիմնված է երկու՝ ներկա և անցյալ, բայափոքրի վրա: Դիմավոր բայերի խոնարհված ձևերն ունեն երեք՝ սահմանական, հրամայական և ստորադասական եղանակներ:

Տարբերակվում են նաև անորոշ և անցյալ դերբայները: Անորոշ դերբայը չի մասնակցում խոնարհմանը, այն առավելապես հանդես է գալիս որպես բայանուն: Անորոշ դերբայի մանրակաղապարն է՝ **անցյալի հիմք + -æon անորոշ դերբայի վերջամասնիկ:**

Անցյալ դերբայը մասնակցում է անցյալ ժամանակաձևերի կազմությանը: Այն կազմվում է հետևյալ կաղապարով՝ **անցյալի հիմք + -æ/ -e վերջամասնիկ**.

Օրինակներ՝ satt-æ/-e «կառուցել, կառուցած», giratt -æ/-e «բռնել, բռնած»:

Վաֆսի բարբառի բայական հարացույցի դիմային ցուցիչները, ըստ բայի ներկա/անցյալ ժամանակների և անցողական/անանցողական սեռադասերի, պայմանավորված ստորոգյալի խնդրային համաձայնությամբ, կամ, այսպես կոչված, էրգատիվ կառուցով, կարելի է բաժանել երկու մեծ խմբի, որոնք պայմանականորեն կանվանենք 1) I_{IV}, 2) II_{IV} և կներկայացնենք ստորև.

| | | 1. I _{IV} (ուղիղ հ.) | | 2. II _{IV} (թեք հոլով) | |
|-------------|---|-------------------------------|----------------------------|---------------------------------|----------|
| | | Վերջածանց | Կցական (օժանդակ բայ) | Կցական | Նախածանց |
| Եզակի | 1 | -om | =im(e) | =om | im- |
| | 2 | -i | =i | =i | i- |
| | 3 | -e (ընդհ.՝ 2սեռ.) | =e (ար), (իգ.) | =es | is- |
| հոգն ակի | 1 | -am(e) | =am(e) | =oan | oan- |
| | 2 | -a | =a | -ian | ian- |
| | 3 | -énd(e) | = énd(e) | =esan | isan- |

Հարկ է նշել, որ՝

I խմբի (I_{IV}) ցուցիչները ուղիղ հոլովի ցուցիչներն են, որոնք սովորաբար որպես վերջամասնիկ միանում են բայերին, բայց կարող են հանդես գալ նաև կցյալ ձևով (ինչպես՝ օժանդակ բայը):

II խմբի (II_{IV}) ցուցիչները թեք հոլովի ցուցիչներն են, որոնք մեծ մասամբ հանդես են գալիս որպես կցյալ, սակայն տեղափոխման մեծ շարժունակությամբ օժտված, երբեմն էլ նախածանցային են կամ անշեշտակիր-նախահար են (proclitic)⁷:

Ստորև ներկայացնենք նշված երկու խմբի գործառույթները՝

1) I_{IV} ցուցիչները նշում են ենթակայի հետ ստորոգյալի համաձայնությունը ներկա ժամանակաձևերի (սահմանական եղանակի ներկա անկատար, ստորադասական և հրամայական եղանակների ժամանակաձևերի) բոլոր՝ և՛ անցողական և թե՛ անանցողական բայերի համար:

I_{IV} եզ.թ. 1-om(e) 2 -i, 3 -e, հզն. 1-am(e), 2 -a 3 -end(e)

⁷ Stillo D. Ditransitive Constructions in Vafsi, p.1

Անցյալ ժամանակի անանցողական բայերը նույնպես խոնարհվում են նշված դիմային ցուցիչների օգնությամբ՝ բացառությամբ միայն եզակի երրորդ դեմքի, որտեղ արական սեռը ստանում է զրո վերջավորություն, իսկ իգականը՝ -æ, ինչպես՝

II_{IV} եզ.թ. -om(e) -im (e) 2 -i, 3 -æ, Ø հզն. 1-am(e), 2 -a 3 -end(e)
 2) II_{IV} -ի գործառույթները երկուսն են՝

ա) որպես ենթակայի հետ համաձայնության ցուցիչներ՝ անցյալ ժամանակի անցողական բայերի համար,

բ) որպես ստացական դերանվանական հոդեր, երբ միանում են գոյականին.

| <i>Եզակի թիվ</i> | | | II _{IV} | <i>Հոգնակի թիվ</i> | | |
|------------------|----|---------|------------------|--------------------|-------------|--|
| 1 | 2 | 3 | 1 | 2 | 3 | |
| -om ~-im | -i | -es~-is | -oan | -ian | -esan~-isan | |

Վաֆսի բարբառի պարզ բայերի կրավորական սեռի ձևայիններն են՝ ներկա ժամանակաձևերում՝ -uæ, անցյալ՝ -ia:

Բազմաբաղադրիչ կամ բարդ բայերի սեռադասային տարբերակումը պայմանավորված է բայական բաղադրիչի սեռային պատկանելությամբ, որոնցից առավել գործածական են՝ ներգործական սեռի համար՝ kær/-d «անել», իսկ կրավորական սեռի՝ bu/b «դառնալ, լինել» պարզ բայերը:

Բարբառում տարբերակվում են որոշչային և պարագայական մակբայներ: Բարբառի որոշչային մակբայներից առավել կիրառական են *ծւհ*, ինչպես՝ næk «լավ» gasd «վատ, տգեղ» և չափ ու քանակի, ինչպես՝ kemi «քիչ», viš «շատ», vištær «ավելի շատ», æslæ «բնավ» մակբայները: Պարագայական մակբայներից նշենք ժամանակի՝ hala/æten/ælan «հիմա», hæziri «երեկ» և տեղի՝ bala «վերև», ben «տակ, ներքև, ստորև» մակբայները:

Վաֆսի բարբառի նախադասության անդամների, նախադասությունների համադաս հարաբերությունը արտահայտվում է հետևյալ համադասական շաղկապների միջոցով. ա/միավորիչ՝ væ «և, ու», ham «նաև», æma «բայց»; բ/միավորիչ-հավելական՝ hæm...ham «էլ... էլ, և՛...և՛», na...na «ո՛չ...ո՛չ»; գ/տրոհական-բաժանական՝ ya «կամ», ya...ya «կամ...կամ»: Կախյալ հարաբերություններն արտահայտվում են հետևյալ ստորադասական շաղկապների օգնությամբ. ke «որ, երբ, որովհետև», ægær «եթե», ægæ kazani «չնայած որ, թեպետ», hæne ke «հենց որ», ta «մինչև և այլն»:

Բոլոր անցյալ ժամանակաձևերի (անց.կատ., անց.անկատ., վաղ.) անցողական և անանցողական բայերի խոնարհման համակարգերի միջև առկա են ձևաբանական և շարահյուսական տարբերություններ: Անանցողական բայ-ստորոգյալը ստանում է I խմբի դիմային

վերջավորություններ (ինչպես ներկայում), որոնք նույնպես համաձայնում են ենթակայի հետ, մինչդեռ II խմբի դերանվանական ցուցիչները նախադաս են անցողական բայահիմքին, սակայն օժտված են դիրքային շարժունակությամբ:

Անցողական բայերը համաձայնում են թե՛ *դերանուն-ուղիղ խնդրի* (օբյեկտ) և թե՛ *գոյական-ուղիղ խնդրի* հետ:

Բայերի ներկա ժամանակը (անկատար, ըղծական և հրամայական) ձևավորվում է բացառապես ուղղական և հայցական կառույցով: Վաֆսի բարբառի անցյալ ժամանակի անցողական նախադասությունների համար բնորոշ են հետևյալ երեք տիպի կառույցները՝ 1) էրգատիվ, 2) էրգատիվ-հայցական, 3) հայցական-էրգատիվ:

ԵՁՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության ենթարկելով Վաֆսի բարբառը, ամփոփելով ատենախոսության մեջ արծարծված հարցերը և ի մի բերելով հիմնական արդյունքները՝ կարելի է նշել, որ.

1. Վաֆսին հարում է հյուսիսարևմտյան իրանական լեզուների թաթական խմբին և խոսվում է չորս գյուղերում՝ Վաֆս, Չեհրեղան, Գուրջան, Ֆարք ` տեղակայված Թեհրանից 200 կմ. հարավ-արևմուտք:
2. Վաֆսիում նկատվում է բառավերջի վանկի ձայնավորների պահպանում, մինչդեռ թեքականության կորստի հետ մեկտեղ իրանական լեզուներում անկում են ապրել նաև բառավերջի ձայնավորները՝ վերջին վանկի շեշտի թուլացման հետևանքով:
3. Խմբակից լեզուների շրջանում որպես առանձնահատկություն վաֆսին դրսևորում է հնչյունական մի երևույթ, որը համատարած բնույթ է կրում բարբառում. միջձայնավորական դիրքում *m* բաղաձայնը կանոնավոր կերպով դառնում է *w* կամ *v*, ինչպես՝ վֆս. *davay* «քիթ» - ժ.պրսկ. *damāy*, վֆս. *kawan* «աղեղ» - ժ.պրսկ. *kamān*, վֆս. *nawa* «նամակ» - ժ.պրսկ. *nāme*, վֆս. *zava* «փեսա» - ժ.պրսկ. *dāmād* և այլն:
4. Վաֆսի բարբառում էական նշանակություն ունի ձայնավորի շեշտակրությունը. բոլոր ձայնավորները շեշտակիր դիրքում արտաբերվում են ավելի երկար, իսկ անշեշտ վանկում կարող են բավականաչափ կրճատվել, նույնիսկ՝ սղվել:
5. Իրանական բարբառների մեծ մասի նման վաֆսիում բառապաշարային հին շերտին զուգահեռ նկատելի են նաև հնչյունական արխաիզմները (այսպես՝ շրթնային ձայնորդ *w* հնչյունի առկայությունը):
6. Բաղաձայնական համակարգի պատմական զարգացումների մանրակրկիտ քննությունը և առկա պատկերը, այստեղ ներկայացված

բառային եզրերը բացահայտում են բարբառում պահպանված իրանական հնչյունական և բառային հին շերտերը:

7. Վաֆսի բարբառին, ինչպես նոր արևմտաիրանական լեզուների մի մասին, հատուկ է գոյականի երկիոլով (ուղիղ-թեք) համակարգը, անորոշ առման, սեռի ու թվի քերականական կարգերը, որոնք բոլորն էլ տարբերակվում են ձևաբանական ցուցիչներով:
8. Գոյականների մեծ մասի հնչյունական կազմը նշում է վերջիններիս արական և իգական սեռը: Իգական սեռի (1) անշեշտ -æ և (2) շեշտակիր -é վերջամասնիկներով գոյականները հակադրվում են միմյանց ոչ միայն շեշտով, այլ նաև տարբեր հոլովական վերջավորություններով: Գոյականը սեռով համաձայնում է որոշային ածականների, որոշային գործառնությունների անցյալ դերբայի, օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի, էրգատիվ կառույցի բայ-ստորոգյալի հետ:
9. Վաֆսի բարբառի թեք հոլովը կիրառվում է հատկացուցչային կառույցում՝ ապահովելով ստացականության իմաստի արտահայտումը, և նախդիրների հետ գործածվող խնդիրներում: Ստացականության կառույցները տարբերակվում են առաջին հերթին ըստ գլխավոր անդամի շնչավոր/անշունչ լինելու հատկանիշի: Շնչավոր հատկացուցիչը, ի տարբերություն պարսկերենի, սովորաբար նախադաս է հատկացչային և արտահայտվում է թեք հոլովով: Անշունչ ետադաս գոյական հատկացուցիչը միանում է իզաֆետային կառույցի՝ անշեշտ -e ցուցիչի միջոցով, սակայն, ի տարբերություն պարսկերենի, հատկացուցիչը դրվում է թեք հոլովով: Հենց այս առանձնահատկությամբ էլ Վաֆսի բարբառի իզաֆետային կառույցը տարբերվում է պարսկերենի իզաֆետից:
10. Ածականները Վաֆսի բարբառում, ըստ դիրքային հատկանիշի, կարելի է բաժանել երկու խմբի՝ գոյականներին ետադաս և, որ առավել հազվադեպ է հանդիպում, գոյականին նախադաս: Ետադաս ածականը հարաբերվում է գոյականին նաև առանց հատուկ միացնող ձևային, այսինքն, ի տարբերություն պարսկերենի, չի ստանում իզաֆետային ցուցիչ: Ետադաս ածականը լրացյալ գոյականի հետ նախ և առաջ համաձայնում է սեռով: Գոյականի սեռը և թիվը չի արտահայտվում նախադաս դիրքում գտնվող ածականներում:
11. Բարբառը տարբերակվում է անձնական, ստացական, ցուցական, անդրադարձ, հարցական, ժխտական, որոշյալ և անորոշ դերանունները: Ինչպես բոլոր թաթա-թալիշական բարբառներում, այնպես էլ Վաֆսի բարբառում ինքնուրույն անձնական և ստացական դերանուններն ունեն երկու հոլով՝ ուղիղ և թեք: Ստացական

դերանունները չեն սահմանափակվում միայն պատկանելության գործառույթով: Դրանք նաև բայական համակարգի դիմային ցուցիչներ են:

12. Վաֆսի բարբառի թվականներն առանձնապես չեն տարբերվում պարսկերենի թվականներից: Դրանք մեծ մասամբ պարսկական փոխառություններ են, որոշակի հնչյունական փոփոխությամբ՝ հիմնականում բառավերջի բաղաձայնների սղմամբ:
13. Վաֆսի բարբառն օժտված է կապերի տեսակների բազմազանությամբ: Բացի ետադրություններից և նախադրություններից՝ Վաֆսի բարբառին հատուկ է նաև երրորդ, այսպես կոչված, շրջանաձև կառույցը, որը նախադրության և ետադրության միաժամանակյա կիրառությունն է:
14. Վաֆսի բարբառի բայական համակարգի խոնարհման հարացույցում ժամանակային հակադրությունը հիմնված է երկու՝ ներկա և անցյալ, բայահիմքերի վրա: Դիմավոր բայերի խոնարհված ձևերը հանդես են գալիս երեք՝ սահմանական, հրամայական և ստորադասական եղանակներով: Տարբերակվում են նաև հետևյալ անդեմ ձևերը՝ անորոշ և անցյալ դերբայները:
15. Կառուցվածքային տեսակետից Վաֆսի բարբառի բայերը դասակարգվում են երեք խմբում՝ 1) պարզ (համադրական), 2) նախդրավոր (նախաձանցավոր) և 3) բարդ կամ հարադիր: Վաֆսի բարբառին հատուկ ժամանականիշ և կերպանիշ ցուցիչները երկուսն են՝ **æt**-ը և **bæ**-ն, որոնցից առաջինը՝ կերպանիշ **æt**- ցուցիչը ժամանակաձևին հաղորդում է անկատար կերպի նշանակություն՝ ձևավորելով ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը: **bæ**- նախամասնիկը կարելի է համարել եղանականիշ, քանի որ նշում է ստորադասական և հրամայական եղանակների բայաձևերը և, միաժամանակ, նշում է կատարյալ կերպի ոչ տևական գործողություն՝ կազմելով սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը:
16. Վաֆսի բարբառի բայական հարացույցի դիմային ցուցիչները, ըստ բայի ներկա/անցյալ ժամանակների և անցողական/անանցողական սեռադասերի, պայմանավորված ստորոգյալի խնդրային համաձայնությամբ, կամ, այսպես կոչված, էրգատիվ կառույցով, կարելի է բաժանել երկու մեծ խմբի, որոնք պայմանականորեն անվանվում են՝ I_ն և II_ն: I_ն-ի ցուցիչները նշում են ենթակայի հետ ստորոգյալի համաձայնությունը ներկա ժամանակաձևերի բոլոր՝ և՛ անցողական և թե՛ անանցողական բայերի համար: I_ն-ի դիմային ցուցիչներն են՝ -om(e), -i, -e, -am(e), -a, -end(e): II_ն -ի գործառույթներն

են՝ ա) որպես ենթակայի հետ համաձայնության ցուցիչներ՝ անցյալ ժամանակի անցողական բայերի համար, բ) որպես ստացական դերանվանական հոդեր՝ երբ միանում են գոյականին: II_ո դիմային ցուցիչներն են՝-om ~-im, -i, -es~-is, -oan, -ian, -esan~-isan:

17. Վաֆսի բարբառի պարզ բայերի կրավորական սեռի ձևայիններն են՝ ներկա ժամանակաձևերի համար՝ -uæ, իսկ անցյալ՝ -ia: Բարդ բայերի սեռադասային տարբերակումը պայմանավորված է բայական բաղադրիչի սեռային պատկանելությամբ, որոնցից առավել գործածական են՝ ներգործական սեռի համար՝ kær/-d «անել» և կրավորական սեռի՝ bu/b «դառնալ, լինել» պարզ բայերը:
18. Բարբառում տարբերակվում են պարագայական և որոշային մակբայներ:
19. Վաֆսի բարբառի նախադասության անդամների համադաս և կախյալ հարաբերություններն արտահայտվում են համապատասխան շաղկապների միջոցով:
20. Վաֆսի բարբառը *սուբյեկտ* (գործողություն կատարող) և *օբյեկտ* (գործողությունը կրող), ինչպես նաև գործողության ոլորտ ընդգրկված առարկաների հոլովական հարաբերությունները նշելու համար օգտագործում է չորս տիպի կառույց, որոնցից մեկը գործում է ներկա ժամանակի համար, այն է՝ 1) ուղղական և հայցական, մյուս երեքը՝ անցյալ. դրանք են՝ 2) էրգատիվ-բացարձակ (թեք-ուղիղ), 3) էրգատիվ-հայցական (թեք-թեք), 4) հայցական-էրգատիվ (թեք-թեք):

ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՅՈՒՎԱԾ ԵՆ ՇԵՏԿՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Մուսավի Միրաք Ֆ. , Վաֆս բարբառի բայերում ba ձևի դասակարգումը, *Orientalia*, h. 6, Երևան, 2008, 49-50:
2. Մուսավի Միրաք Ֆ. , Վաֆսի բարբառի ընդհանուր բնութագիրը, *Orientalia*, հհ. 7-8, Երևան, 2008, 105-108:
3. Moosavi Mirak F. , Nominal System in Buzābādi, One of the North-Eastern Dialects of Iran, *Life Sei J*, 9 (4), New York, 2012, 1591-1593.
4. Moosavi Mirak F. , Kohan rustāye Vafs, *Orientalia*, h. 5, Երևան, 2007, 15-17.
5. Moosavi Mirak F. , Noun Phrases in Vafs Dialect, *Life Sei J*, 9 (4), New York, 2012, 1698-1703.
6. Moosavi Mirak F. , Religious Semiotics among Muslim People of Vafs, *Analytica Iranica*, France, 2012, 207-216.

Фатеме Мусави Мирак

ДИАЛЕКТ ВАФСА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 «Общее и сравнительное языкознание»

Защита состоится 18 июня 2018 в 15.00 часов на заседании

Специализированного совета по Лингвистике 019 ВАК

при Институте языка имени Р. Ачаряна Национальной академии наук РА

(адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

Представляемая диссертация посвящена синхронному и диахроническому изучению иранского диалекта Вафса, принадлежащий к группе татских диалектов северо-западных иранских языков. Диалект Вафса, который распространен в четырех основных поселениях провинции Хамадана- Вафс, Чехрекан, Гурчан и Фарк, лишен письменной традиции, факт, который подчеркивает важность данного исследования. Диалект включает иранские архаические грамматические и словарные формы, которые засвидетельствованы только в этом диалекте. Сравнительный анализ диалекта показывает, что Вафси принадлежит к группе татских диалектов северо-западных иранских языков.

Диссертация «Диалект Вафса» состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы и листа сокращений.

В **«Введении»** рассматривается проблема о месте данного диалекта среди иранских языков, приводятся данные о географическом расположении и численности населения поселка Вафса. Представлена также теория этимологии слова «вафс», историческая информация о местонахождении Вафса и подробный обзор литературы.

Первая глава – **«Фонетика»**, посвящена составу вокализма и консонантизма диалекта Вафса в синхронном плане.

У диалекта Вафса много общего с центральными и татскими группами диалектов. Фонетика диалекта Вафса также характерна для этих диалектов. Различия могут наблюдаться в длительности произношения гласных звуков. В диалекте можно выделить следующие гласные: а, æ, о, і, u, е. Звук æ в данном диалекте произносится как промежуточный звук между долгой ā и краткой ə-, использование которого в некоторых случаях носит произвольный характер.

Звуки системы консонантов в большинстве случаев совпадают со согласными звуками современного персидского языка. Исключением является

губной **w**, который вероятно можно включить в состав фонетических архаизмов. Гортанные арабские согласные **ɣ** (‘) и **q** (qaf) встречаются исключительно в арабских, иногда и в турецких заимствованиях. Однако нужно отметить, что носители диалекта очень часто произносят этот звук без особого гортанного нюанса; в первом случае произнося как звук **a**, а во втором - **y**.

В диалекте Вафса развита система дифтонга. В отличие от персидского языка, где функционируют лишь два дифтонга **-ey, ou-**, в Вафси существуют пять дифтонгов - **aw, æw, ow, uw, oa**. Последний дифтонг имеет очень ограниченное применение.

Во второй главе «**Морфология**» представлены морфологические особенности диалекта. Диалекту Вафса присуща двух падежная система (прямой и косвенный) существительного, а также категории числа (единственное - множественное), рода (мужской - женский), определённости – неопределённости, которые отличаются специальными морфологическими показателями.

В диалекте Вафса различают следующие типы местоимений - личные, указательные, энклитические, возвратные, вопросительные, негативные, определенные и неопределенные.

Диалект Вафса представляется развитой системой послелогов и предлогов и кроме этого наблюдается, так называемая, рамочная конструкция, которая представляет собой одновременное применение вышеупомянутых предлогов и послелогов.

Парадигма глагольной системы в целом основывается на оппозиции основ настоящего и прошедшего времени. Существуют три наклонения - изъявительное, сослагательное и повелительное. Также различаются следующие безличные формы: инфинитив и причастие прошедшего времени.

В роли показателя времени и вида в диалекте выступают **æt-** и **bæ-**, первый из них придает глаголу значение несовершенного вида, префикс **bæ-** обозначает наклонение спряженного глагола.

Личные показатели глагольной парадигмы диалекта Вафса по параметрам временной оппозиции и переходности/непереходности глагола можно определить в две крупные группы, которых мы условно называем **I_г** и **II_г**. Личные окончания первой (**I_г**) группы: **-om(e), -i, -e, -am(e), -a, -end(e)**. Личные окончания второй (**II_г**) группы: **-om /-im, -i, -es/-is, -oan, -ian, -esan/-isan**.

Пассивный залог простых глаголов в настоящем времени формируется с помощью формантов **-iaæ**, а прошедшем — **-ia**:

В заключении диссертации приводятся выводы и подводятся основные итоги работы.

Fatemeh Moosavi Mirak

THE DIALECT OF VAFS

Dissertation for the Candidate's Degree of Philological Sciences,
Specialty 10.02.02 "General and Comparative Linguistics"

The defense will be held on June 18 at 15.00 at the session of the HAC Academic Council on Linguistics 019 in the Institute of Language after Hr. Acharyan of the National Academy of Sciences RA
(address: Yerevan, 0015, Grigor Lusavorich str., 15)

SUMMARY

The dialect of Vafs which is spoken in four main districts of the province of Hamadan in Iran is devoid of writing tradition. Thus, the study of this dialect is of great importance. It possesses such archaic grammatical and word elements which are not attested in any other dialect. Comparative analysis of the dialect indicates that it belongs to the Tati group of northwestern Iranian languages.

The current dissertation entitled "The dialect of Vafs" consists of introduction, two chapters, conclusions, the list of literature and abbreviations.

The **Introduction** addresses the problem of the position of Vafs dialect in the system of Iranian languages and provides information on the geographical location and population of the village of Vafs. The paper also includes the clarification of the etymology of the word "vafs", the historical and chronological details of Vafs region and circumstantial analysis of scientific literature.

The first chapter - "Phonetics" is devoted to the composition of vocalism and consonants of the dialect of Vafs. The dialect of Vafs has common features with both the central and Tati dialects of western Iranian languages. Some differences exist in the duration of the pronunciation of vowels. Vafs has six vowel phonemes: **a, æ, o, i, u, e.**

The sound (**æ**) in this dialect is pronounced as an intermediate sound between a long **ā** and a short **ə**. The use of this sound is very often of arbitrary nature.

The consonants of the Vafs dialect are generally like those in modern Persian language. The only exclusion is the existence of labial **w**, which is probably an archaic element of Vafs. The guttural sounds **ɣ(')** and **q** (qaf) are exclusively presented in Arabic or Turkish borrowings. As we found out during the research, the Vafs speakers pronounce these two sounds with no guttural cover. The first one is pronounced as **a** and the second one is pronounced as **ɣ** (gh).

Vafs dialect has well developed system of diphthongs. In contrast with the Persian language, which has two diphthongs (**ey**, **ou**), Vafs has the following five diphthongs: **aw**, **æw**, **ow**, **uw**, **oa**. The last one is not often used.

The **second chapter “Morphology”** presents the morphological characteristics of this dialect. The dialect of Vafs demonstrates highly developed grammatical categories. Like a part of new west Iranian languages, nouns are inflected for gender (masculine, feminine), number (singular, plural) and case (direct, oblique).

The Vafs dialect differentiates personal, possessive, demonstrative, reflexive, interrogative, negative, definite and indefinite pronouns.

The Vafs dialect is famous for its wide variety of prepositions and postpositions. Besides there is a so-called framework design which is the compounded usage of both prepositions and postpositions.

The paradigm of the verbal system is based on the opposition of present and past tenses. Definite forms of the verbs are defined in indicative, imperative and conjunctive moods.

Vafs also has the following impersonal forms: infinitive and past participle. The prefixes **æt-** and **bæ-** indicate the tense and person. The first one gives the meaning of imperfective aspect to the verb and the second one indicates the mood of the conjugated verb.

According to the parameters of the tense opposition and transitivity / intransitivity of the verb, the personal markers of the verbal paradigm in Vafs can be divided into two main groups, which are conditionally called **Ig** and **IIg**. The personal suffixes of the first group are **-om(e)**, **-i**, **-e**, **-am(e)**, **-a**, **-end(e)**. The second group presents the following suffixes: **-om** / **-im**, **-i**, **-es/-is**, **-oan**, **-ian**, **-esan/-isan**.

The passive voice of the simple verb in the present tense is formed with the **-uæ** formant and the formant **-ia** stands for the past tense.

In **Conclusion** the main findings and inferences of the research are summarized.

